

## Քիզնեսի զարգացման փորձագետ

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի Նախարարության «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կազմակերպություն) իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն է: Կազմակերպության գործունեության հիմնական նպատակներն են՝ տեխնոլոգիաների փոխանցման գործուն մեխանիզմների ձևավորումն ու ներդրումը, քիզնեսին (այդ թվում՝ փոքր և միջին) աջակցության և խորհրդատվության տրամադրումը, ինչպես նաև գիտատեխնիկական տեղեկատվական և գրադարանային ծառայությունների մատուցումը:

### Պահանջվող որակավորումները

- Բարձրագույն կրթություն տնտեսագիտության, քիզնես վարչարարության, կառավարման կամ դրա հարակից ոլորտում,
- Գերազանց բանավոր և գրավոր հաղորդակցման հմտություններ՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով,
- Կազմակերպչական գերազանց հմտություններ, առաջնահերթություններ սահմանելու հարցում և վերջնաժամկետներում աշխատելու ունակություն:

### Պարտականություններ

- Տրամադրել խորհրդատվություն փոքր և միջին քիզնեսին և այլ գործարարներին Հայաստանում քիզնես հիմնելու հարցում,
- Իրականացնել Հայաստանում քիզնես ոլորտի ուսումնասիրություն քաղաքականության ուսումնասիրություն,
- Հանդիպել ընկերությունների ներկայացուցիչների հետ՝ վերլուծելու առկա խնդիրները և տալ այդ խնդիրներին լուծումներ,
- Հետևել շուկայի փոփոխվող միտումներին և պետական քաղաքականությանը՝ առաջարկել ոլորտային նոր լուծումներ,
- Ներկայացնել իրականացրած աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, Կազմակերպության քիզնես Էկոհամակարգի հետ կապված միջոցառումների, վեբինարների և կոնֆերանսների ժամանակ,
- Մասնակցել Կազմակերպության բոլոր նախագծերի գործարկմանը՝ Կազմակերպության գործունեության նպատակների և ռազմավարությամբ առաջադրված խնդիրների լուծման համար:

### Լրացուցիչ տեղեկություններ

- Տևողությունը՝ Ամբողջական դրույք, (9:00-18:00)
- Հասցե՝ Կոմիտաս 49/3

Հետաքրքրված թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականները հետևյալ հասցեով՝ [info@ncie.am](mailto:info@ncie.am), subject դաշտում նշելով «քիզնեսի զարգացման փորձագետ»: Հայտերը պետք է ներկայացվեն մինչև 2022 թվականի **սեպտեմբերի 15-ը** և միայն կարճ ցուցակում ընդգրկված թեկնածուները կիրավորվեն հարցազրույցի: